Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 13.11.2023թ. թիվ 2317412443 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին

<<01>>12 2023թ. 7-13- 12128 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ն.Սարգսյանս, վերանայելով Բաբկեն Սարգսյանի ՄԴ/97327-23 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Քաղաքացի Բաբկեն Սարգսյանը (ծանուցման հասցե՝ քաղաք Երևան, Զաքարիա Քանաքեռցու փողոց, 128ա շենք, 32 բնակարան) դիմումով բողոքարկել է Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 13.11.2023թ. թիվ 2317412443 որոշումը՝ նշելով, որ իրավախախտում չի կատարել:

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ: Իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում, իսկ կասկածի դեպքում մեկնաբանվում է հօգուտ անձի:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 13.11.2023թ. թիվ 2317412443 որոշումը ենթակա է բեկանման հետևյալ պատճառաբանությամբ.

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին որոշման հիմքում դրված տեսանյութի լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում իրավախախտման փաստի առկայությունը համարվել է կասկածելի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 13.11.2023թ. թիվ 2317412443 որոշումը բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Բաբկեն Սարգսյանին:

Ա.Սարգսյան

Կատարող՝ Ա.Ալեքսանյան
Հեռ.011544783